

# Կարծիք

## Ղուկասյան Վարդուհի Արթուրի

<< Դիվանագիտական դիսկուրսի ոճական և գործաբանական բնութագիրը >>

Ժ. 02. 07. - <<ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ  
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ  
ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեզվի և հաղորդակցման հիմնահարցերի լուսաբանումը լեզվագիտական ուսումնասիրության առանցքային և բարդ խնդիրներից է, հատկապես, երբ խոսքը վերաբերում է խոսող/հեղինակ և լսող/ընթերցող փոխհարաբերության, լեզվի և մտածողության, լեզվակիրների գիտակցության մեջ լեզվական աշխարհի կադապարման, հաղորդակցական մտադրության, մտածելակերպի դրսևորման, հասցեատիրոջ կողմից ընկալման և մեկնաբանման խնդիրներին, որոնց լուծման բանալին գտնվում է ինչպես լեզվաբանական, այնպես էլ մի շարք այլ գիտությունների հետազոտությունների խաչմերուկում: Արդի շրջանում, երբ գնալով աճում է հետաքրքրությունը ճանաչողական-գործաբանական հայեցակերպի շրջանակներում առաջ քաշված խնդիրների ուսումնասիրության նկատմամբ, առավել կարևորվում է նմանատիպ աշխատանքների դերը:

Կենդանի խոսքում՝ նրա թվացյալ պարզունակությամբ հանդերձ, նկատվում է ձևաստեղծման մեխանիզմների բազմազանություն: Խոսքի իրականությունն է, որ ստիպում է զբաղվել այնպիսի հետազոտություններով, որոնց հիմքում ընկած է մարդու գործոնը՝ մասնավորապես վերջինիս գործունեության կարևոր ձևերի՝ խոսքային և հանրությային գործունեության կապը: Ուստի պատահական չէ, որ մեծ է լեզվաբանների հետաքրքրությունը դեպի <<խոսող-նշան-լսող>> հարաբերությունը: Ոչ պակաս կարևոր է նաև սոցիալական համատեքստի դերը հաղորդակցման գործընթացում: Այս առումով, Վարդուհի Ղուկասյանի ատենախոսությունը, որտեղ նկարագրական դասակարգման, հաղորդակցական, քանակական և որակական բովանդակության վերլուծության և այլ մեթոդների կիրառմամբ քննվում են

դիվանագիտական դիսկուրսի ռճական և գործաբանական առանձնահատկությունները, լիովին համապատասխանում է արդիական միտումներին:

Արդիական են է ն՛ թեման, ն՛ կիրառված մոտեցումները:

Պայմանավորված աշխարհում առկա սոցիալ-քաղաքական իրավիճակով, միջազգային արդյունավետ փոխգործակցության զարգացման միտումով՝ դիվանագիտական հաղորդակցության քննությունը ունի առանձնահատուկ կարևորություն: Եվ քանի որ մարդկային միտքը հանդես է գալիս բազմազան դրսևորումներով, ուստի պատահական չէ, որ որքան դյուրին է դիվանագիտական հաղորդակցությունն ապահովող լեզվական միջոցների դրսևորումն ու արձանագրումը, նույնքան բարդ ու դժվար դրա գիտական մեկնաբանությունը: Այս բարդ խնդիրը խորապես ուսումնասիրելու համար անհրաժեշտ է առաջնորդվել լեզվաբանական մտքի կողմից մշակված սկզբունքներով և արդեն իսկ գիտականորեն փորձարկված մեթոդներով:

Գրախոսվող ատենախոսության նորույթը դիվանագիտական լեզվի հնարավորինս համալիր հետազոտությունն է՝ լեզվական, ռճական, գործաբանական, ճանաչողական հայեցակերպերի համադրմամբ: Ուստի գովելի է հեղինակի՝ հարցի նկատմամբ դրսևորած նման մոտեցումը, ինչը հնարավոր է դարձնում ուսումնասիրել դիվանագիտական հաղորդակցության ամբողջական գործընթացը՝ սկսած ձևավորումից և առկայացումից մինչև մեկնողական ընկալում:

Հեղինակին հաջողվել է դիվանագիտական լեզվի ռճական և գործաբանական քննության ճանապարհով ներթափանցել հեղինակ-դիվանագետի մտային և հուզական ներաշխարհը, ծանոթանալ նրա աշխարհայացքին, հաղորդակցական մտադրությանը, բացահայտել վերաբերմունքը առկա իրավիճակի նկատմամբ: Ատենախոսը նպատակ ունի՝ դիվանագիտական հաղորդակցության լեզվական միավորների ռճագործաբանական առանձնահատկությունների քննությամբ բացահայտել, վերլուծել, կարևորել հեղինակի մտադրության հայեցակերպի դերը, ցույց տալ հեղինակի մտադրության առկայությունը, քննել լայն առումով խոսող-լսող

հարաբերակցությունը՝ ելնելով դիվանագիտական տեքստի լեզվական յուրահատկություններից: Աշխատանքում ելակետային է այն դրույթը, որ դիվանագիտական թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքը բնութագրվում է որպես նպատակաուղղված հաղորդակցական գործընթաց, որը հեղինակ-դիվանագետին հնարավորություն է տալիս ներագդել լսողի/ընթերցողի վրա՝ ընդգծելով իր անհատական ոճը, իսկ լսողին/ընթերցողին՝ ընկալել և վերլուծել <<հեղինակի միտում-դիվանագիտական նյութի խոսքային (բանավոր/գրավոր) դիմանկար>> կապը:

Ատենախոսությունն ունի դասական կառուցվածք՝ բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և երկու հավելվածից:

Ներածական մասում ատենախոսը ներկայացրել է թեման, թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, գործնական ու տեսական արժեքը և շարադրել բուն խնդիրները:

Առաջին գլուխը նվիրված է դիվանագիտական դիսկուրսի քննության տեսական հիմքերի շարադրմանը: Հեղինակին հաջողվել է բարեխիղճ և մանրագնին կերպով շոշափել այն տեսական դրույթներն ու հասկացությունները, որոնք մշակվել և օգտագործվել են նրա հետագա վերլուծություններում: Հարկ է նշել, որ տարբեր ավանդական և ժամանակակից մոտեցումներին անդրադառնալու հետ մեկտեղ հեղինակը արտահայտել է նաև իր սեփական կարծիքը և արել ինքնուրույն եզրահանգումներ:

Երկրորդ գլխում քննվում են դիվանագիտական փաստաթղթերը, վերլուծվում դիվանագիտական հաղորդակցության ռազմավարություններն ու մարտավարությունները:

Գործնական տեսանկյունից առավել հետաքրքրական է ատենախոսության երրորդ գլուխը, որտեղ քննվում են հուզարտահայտչական լեզվական միջոցները դիվանագիտական հաղորդակցության մեջ: Հեղինակին հաջողվել է իրագործել իր գերակա նպատակը՝ մանրամասն մշակել, վերլուծել խոսքին յուրահատուկ

հուզականություն հաղորդող ոճական միջոցները՝ կրկին անգամ հիմնավորելով այն ելակետային դրույթը, որ խոսողի հաղորդակցական նպատակի իրագործումը և լսողի կողմից խոսողի վերոնշյալ նպատակի ճիշտ ընկալումը իրականացվում է համատեքստային միջոցների քննությամբ:

Ուզում եմ նշել, որ ներկայացված օրինակների մանրամասն քննությունը առավել մեծ ակնհայտությամբ է ի ցույց դնում ատենախոսության հեղինակի լեզվական զգացողությունը ու դատողությունների տրամաբանական ճիշտ ընթացքը:

Ատենախոսությունը համապատասխանում է իր ժանրի բոլոր չափանիշներին, հղումներ են արվում համապատասխան քանակի և որակի նոր և դասական աշխատություններից, որոնք արտացոլված են գրականության ցանկում, իսկ փաստական նյութի մանրամասն վերլուծությունը հնարավորություն է տվել ատենախոսին անել ինքնուրույն եզրահանգումներ հետազոտությունների արդյունքների վերաբերյալ:

Որպես աշխատանքի ոչ պակաս կարևոր արժանիք, կցանկանայի առանձնահատուկ նշել նաև գեղեցիկ լեզուն և գիտական սեղմ ոճը, որը դյուրին ու հաճելի է դարձնում ընթերցումը:

Այնուամենայնիվ, կցանկանայի անդրադառնալ որոշ, ոչ սկզբունքային բնույթ կրող դիտարկումների և առաջարկների:

1. Հետաքրքիր կլիներ պարզել, թե արդյո՞ք դիվանագիտական բանավոր հաղորդակցության վերլուծության ընթացքում հանդիպել են խոսողի հաղորդակցական միտումի թյուրըմբռնման դեպքեր, որոնք հանգեցրել են սխալ մեկնաբանությունների և համապատասխանաբար գործաբանական ձախողումների (pragmatic failures):

2. Հետագա ուսումնասիրության համար կառաջարկեի անդրադառնալ նաև ոչ խոսքային և հարախոսքային միջոցների քննությանը: Շատ հետաքրքիր կլինի քննել, թե ինչպես են վերջիններս գործառում դիվանագիտական բանավոր հաղորդակցության մեջ, հատկապես բանավեճերում:

3. Հետաքրքիր է իմանալ՝ արդյո՞ք նկատվել է տարբերություն կին և տղամարդ դիվանագետների ելույթներում հուզարտահայտչական միջոցների կիրառման դիտանկյունից:

Թե՛ գործնական, և թե՛ տեսական առումներով գործ ունենք լուրջ գիտական աշխատանքի հետ, ուր խնդրո առարկա հիմնահարցը քննվել է բազմակողմանի և խորությամբ: Աշխատանքն ունի գիտահետազոտական ակնհայտ հեռանկարներ և ուսուցողական մեծ արժեք:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են մատչելի լեզվով, դրանց ձևավորումը համապատասխանում է ներկայացվող պահանջներին: Վարդուհի Արթուրի Ղուկասյանի «Դիվանագիտական դիսկուրսի ոճական և գործաբանական բնութագիրը» թեմայով ատենախոսությունն իր արդիականությամբ, գիտական մակարդակով, խնդիրների ընդգրկմամբ, ստացված արդյունքների հիմնավորվածությամբ և կիրառման հնարավորություններով համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Երևանի պետական համալսարանի  
անգլիական բանասիրության ամբիոնի  
դոցենտ, ք.գ.թ. Գոհար Հարությունյան  
05.02.2025



*[Handwritten signature]*

*Կասյան ԾԾ.  
Գ.Գ. Գրաբեկյան  
Բ.Գ. Գրաբեկյան  
ՄԵՍԻ Զ. Գրաբեկյան*

*[Handwritten signature]*